27 հունվարի, 2007թ.

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը և Շիրակի երկրագիտական թանգարանը համատեղ կազմակերպել էին հանդիպում Գյումրու մտավորականության և ուսանողության հետ՝ նվիրված Հայաստանի տարվա շրջանակներում Ֆրանսիայի Սան Ռաֆայել քաղաքում ընթացող «Հայաստանի լեռներում. 500.000 տարվա պատմություն» խորագրով հնագիտական ցուցահանդեսին, որի ցուցանմուշների մոտ 90 տոկոսը ներկայացնում էր Շիրակի տարբեր տարիների պեղումների ընտրանին՝ հայտնաբերված շուրջ 30 հնավայրերից: Հանդիպումը բացեց ՇՀՀ կենտրոնի տնօրեն պրոֆեսոր Ս. Հայրապետյանը, որը, գիտամշակութային, նաև քաղաքական տեսանկյունից արժեքորելով ցուցահանդեսը, ըստ արժանվույն գնահատեց նրա գլխավոր կազմակերպիչների՝ կենտրոնի գիտաշխատողներ, Շիրակի երկրագիտական թանգարանի տնօրեն Համազասպ Խաչատրյանի և պ.գ.թ. Լարիսա Եգանյանի ջանքերը: Վերջիններս փոխնիփոխ ելույթներով հանգամանորեն ներկայացրին ցուցահանդեսի նախապատրաստման ծանր ու դժվարին ընթացքը, նրա հսկայական հաջողությունն ու հիացական արձագանքները եվրոպական երկրներում: Կատարված հսկայածավալ աշխատանքների արդյունքը շքեղ ձևավորում ունեցող 2100 էջանոց այն գիտական կատալոգն է, որ ֆրանսիական կողմը լույս ընծայեց մեր հնագետների ամենագործուն մասնակցությամբ: Գրքի առաջին գլխում մեր ֆրանսիացի գործընկերների տպավորություններն են Շիրակի մի քանի հնավայրերի մասին, որտեղ նրանք աշխատել են գյումրեցի հնագետների կողքին, հաջորդ գլուխները նվիրված են Շիրակի բնաշխարհին, նրա հնագիտական հետազոտությունների անցյալին ու ներկային, Շիրակի երկրագիտական թանգարանին: Կատալոգը, հիրավի, անկրկնելի է իր ձևավորման ոճական թարմ լուծումներով, ցուցանմուշների բարձրարվեստ լուսանկարներով ու տեղեկատվական հարուստ հնարավորություններով: «Այս ցուցահանդեսով մենք Եվրոպայում տեսանելիորեն ներկայացրինք մեր այն հարստությունները, որոնք լոկ իրենց խոսքերում են հիշում մեր շատ ու շատ դեկավարներ»,- նշեց բանախոս Հ. Խաչատրյանը: Հանդիպումն ավարտվեց մտքերի բուռն փոխանակմամբ: Ելույթ ունեցողներն ընդգծեցին այն քրտնաջան աշխատանքը, որ կատարել են Շիրակի հնագետները Հայաստանն ու հայկական մշակույթը Եվրոպայում լավագույնս ներկայացնելու ձգտումով:

20 մարտի, 2007թ.

ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» ժողովածուի IX հատորը՝ 14 հրատարակչական մամուլ ծավալով: Հատորում տեղ են գտել 35 գիտական հոդվածներ, հրապարակումներ և հաղորդումներ՝ ԳԱԱ Շիրակի հայագիտականի (16), Հնագիտության և ազգագրության (2), Արվեստի (2), Պատմության (2) ինստիտուտների, Գյումրու մանկավարժականի (9) և այլ գիտական ու կրթական հաստատությունների աշխատակիցների հեղինակությամբ: Ժողովածուն ավանդաբար ավարտվում է հատորում տպագրված ամբողջ նյութի համառոտ անգլերեն ամփոփումով, որը տեղադրվում է նաև կենտրոնի համացանցային կայքում:

Հացահատկի ուրարտական և Արտամեղի հին աստվածություններից մինչև Վահրամաբերդ գյուղի արդի քնարական բանահյուսությունը, Պոնտոսի արքայական և Գուգարքի բդեշխական տոհմերի ազգակցության հարցերից մինչև Ալեքսանդրապոլի գավառի խորհրդայնացման խնդիրները, Հայկաձորի միջնադարյան քարանձավային բնակավայրերի հետազոտությունից մինչև Հայաստանի հյուսիսի (Մեծ Սեպասար) արդի պեղումները, շիրակյան ազգագրական հետաքրքիր նյութից մինչև հոգեկարգավորման արդի գործընթացների վերլուծություն, հին հայոց բանակային նվագարանների ու Անանիա Շիրակացու հիմներգերի մասին հետաքրքիր նյութերից մինչև Ն. Տիգրանյանի ստեղծագործությունը, հաղորդումներ՝ նվիրված էթնոսոցիոլոգիայի, անցումային տնտեսության, լրագրության, գեղարվեստի, լեզվի ու ոճի, գրականության, դասավանդման մեթոդական-մասնագիտական մի շարք խնդիրներին-այսպիսի լայն և ուշագրավ «աշխարհագրություն» ունեն այս ժողովածուում տպագրված նյութերը: Հատորի շապկի առաջին էջին Մարմաշենի (VII-XI դդ.) հռչակերտ վանական համալիրի պատկերն է՝ արված



շնորհալի լուսանկարիչ Ս.Դարբինյանի ձեռքով:

19 հոկտեմբերի, 2007թ.

Գյումրում հանդիսավորությամբ նշվեց Գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հիմնադրման տասնամյա հոբելյանը: Գյումրու «Պրոգրես» համալսարանի հյուրընկալ հարկի տակ հոկտեմբերի 19-ին հավաքված քաղաքի գիտական, կրթական ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, ստվարաթիվ ուսանողները ջերմությամբ ու սիրով ծափահարեցին Հայագիտական հետազոտությունների կենտրոնի 10-ամյակի հանդիսությանը ժամանած ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռաֆիկ Մարտիրոսյանին, Շիրակի մարզպետ Լ.Նանյանին, ակադեմիկոս Վլ. Բարխուդարյանին, ակադեմիայի թղթակից-անդամներ Ա.Մելքոնյանին, Ա. Եղիազարյանին, Մ.Հարությունյանին, Ս. Հովհաննիսյանին, Ակադեմիայի հումանիտար մի շարք ինստիտուտների տնօրեններին, հանրապետության տարբեր գիտական հաստատություններից, ինչպես նաև բուհերից ժամանած բազմաթիվ այլ անվանի գիտնականներին:

Կենտրոնի 10 տարիների ձեռքբերումների հանրագումարումն էր նրա տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգո Հայրապետյանի խոսքը, որում նա նախ կարևորեց Շիրակի պատմամշակութային ժառանգության հիմնախնդիրներին նվիրված առաջին գիտաժողովները (1994,1996) դերը ոչ միայն Շիրակի հայագիտական հետազոտությունների մակարդակի բացահայտման, այլև տեղի հայագիտական մեծ ներուժի իրական հնարավորությունների հայտածման և դրա հիման վրա՝ Գյումրիում ակադեմիական հումանիտար կառույց ունենալու հարցի առաջադրման և լուծման մեջ (զեկուցումն ամբողջությամբ տե՛ս էջ 8-ում): Վերջում Ս. Հայրապետյանը հավաստիացրեց, որ «ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը թևակոխում է իր գոյության երկրորդ տասնամյակը՝ իմաստնացած իր ապրած տարիների փորձով, ձեռքբերումների ու կորուստների, արածի ու չարածի հանրագումարով, գիտական ու մշակութային այլ կազմակերպությունների հետ մեկտեղ Շիրակի նյութական ու հոգևոր ծովածավալ հարստության ուսումնասիրությունը շարունակելու իր երթին հավատարիմ»:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանն իր ողջույնի խոսքում ընդգծեց, որ թեև 10 տարին գիտական հաստատության տարեգրության փոքր ժամանակահատված է, սակայն զարմանալիորեն մեծ ծավալի գործ է կատարվել, և այսօր Շիրակի հայագիտականը Հայաստանի գիտությունների ակադեմիայի լավագույն հաստատություններից մեկն է: Ծափերով ընդունվեց Ակադեմիայի նախագահի այն միտքը, որ այսօր, ավելի քան երբևէ հասունացած կարելի է համարել Գյումրիում Գիտությունների ազգային ակադեմիայի Հյուսիսային բաժանմունքի ստեղծման հարցը, ինչը իրավամբ եղել և մնում է քաղաքի մտավորականության երկար տարիների երազանքը:

Կենտրոնի հիմնադրման 10-ամյակի հանդիսությանն իրենց ողջույնի խոսքն էին բերել նաև ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյանը, Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի տնօրեն Սնաղա Հովհաննիսյանը, Արվեստի ինստիտուտի տնօրեն Աարարատ Աղասյանը, հանրապետության մի շարք երևելի գիտնականներ, Գյումրու բուհերի ռեկտորներ և այլք: Հոբելյանի կապակցությամբ և գիտահետազոտական ծրագրերում ունեցած ակնհայտ հաջողությունների համար կենտրոնի մի խումբ գիտաշխատողների հանձնվեցին ԳԱԱ նախագահության վաստակագրեր:

19 հոկտեմբերի, 2007թ.

Բացվեց երկու-երեք տարին մեկ Գյումրիում ավանդաբար գումարվող հանրապետական արդեն յոթերորդ գիտաժողովը՝ նվիրված Շիրակի պատմամշակութային ժառանգությանը: Մասնակիցներին ջերմորեն ողջունեցին և արգասաբեր աշխատանք մաղթեցին գիտաժողովի կազմկոմիտեի համանախագահներ՝ Շիրակի մարզպետ Լ. Նանյանը, ԳԱԱ Հումանիտար և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Վ. Բարխուդարյանը, գիտաժողովի պաշտոնական կազմակերպիչ հանդիսացող ԳԱԱ Շիրակի հայագիտական կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր Ս.Հայրապետյանը: Վերջինս իր խոսքում նաև առանձնակի կարևորեց այն էական աջակցությունը, որ նման խոշորամասշտաբ գիտամշակութային միջոցառման նախապատրաստման հարցում կենտրոնին ցուցաբերեցին «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը՝ ի դեմս նրա նախագահ Գ. Ծառուկյանի և ՀՀ ԱԺ-ում այդ կուսակցության ֆրակցիայի քարտուղար Ա. Սաֆարյանի, ինչպես նաև Գյումրուց ՀՀ ԱԺ պատգամավոր Մ.Գրիգորյանը: Այնուհետև անդրանիկ լիագումար նիստում լսվեցին ուշագրավ գիտական հաղորդումներ՝ Երևանի պետական համալսարանի հայ գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտու-

թյունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Մուրադյանի «Հովհաննես Շիրազը և Գյումրին», ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լ. Երնջակյանի «Ալեքսանդրապոլի երաժշտական ավանդույթները Մերձավոր Արևելքի մշակութային փոխազդեցությունների համատեքստում», ՀՀՀ կենտրոնի գիտաշխատող Հ. Խաչատրյանի «Շիրակի հնագիտական ուսումնասիրությունը երեկ և այսօր» և Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի դասախոս, թատերագետ, արվեստի վաստակավոր գործիչ Լ.Մութաֆյանի «Թատերական կյանքի ձևավորումը Ալեքսանդրապոլ-Գյումրիում» զեկուցումները:

Ապա նույն երեկոյան և հաջորդ երկու օրերին գիտաժողովը շարունակեց աշխատանքները երեք մասնաճյուղերում՝

ա. պատմագիտություն, հնագիտություն, վիմագրություն, մարդաբանություն

բ. ազգաբանություն, բանագիտություն, էթնոսոցիոլոգիա

գ.ճարտարապետություն, արվեստաբանություն, բանասիրություն

Ա մասնաճյուղի աշխատանքն սկսվեց ՀՀՀ կենտրոնի գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր Ս. Պետրոսյանի «Գյումրու ուրարտական գոտու բեկորի մեհենագրերը» հաղորդումով: Հայաստանի պատմության ազգային թանգարանում պահվող Գյումրու հնագիտական ֆոնդերի մի խմբի մեջ հայտնաբերված ուրարտական գոտու բեկորի արձվառյուծի մեհենագրերի ընթերցումը հնարավորություն է ընձեռել բացահայտելու արձվառյուծի Սինամ հավ(ք) անունը, որը նա կրել է Արուսյակ մոլորակի կենդանական դրսևորումը լինելու պատճառով: Վանի թագավորության ժամանակաշրջանում պատմական Շիրակին վերաբերող հատուկ անուններին էր նվիրված Պատմության և մշակույթի հուշարձանների պետական գործակալության աշխատակից Վ.Ծատրյանի ելույթը: ՀՀՀ կենտրոնի գիտաշխատող Լ.Պետրոսյանի հաղորդման թեման էր «Երևանդավանի ճակատամարտը և դրա հետևանքները»: Խոսվեց այն մասին, որ հիշյալ ճակատամարտում կրած պարտությունը հանգեցրեց ոչ միայն Երվանդ Վերջինի սպանությանը, այլև Երվանդունի արքայատոհմի գահակալման ընդհատմանը և նրա փոխարինմանը մի նոր, առավել հզոր Արտաշիսյան արքայատոհմով:

Հայաստանի վաղքրիստոնեական կոթողների աշխարհագրության ու պատմական նշանակության մասին խոսեց Երևանի պետական համալսարանի դասախոս Լ.Միքայելյանը: Գյումրու մանկավարժական ինստիտուտի դասախոս Վ. Աբրահամյանը խոսեց Գագիկ Ա Բագրատունու և նրա հաջորդների օրոք Անիի թագավորության տարածքների ու սահմանների մասին: ԳԱԱ ՀՀՀ կենտրոնի ավագ գիտաշխատող Ա.Հայրապետյանի հաղորդումը նվիրված էր XVI-XVIIIդդ. Արևելյան Շիրակի վարչաքաղաքական իրավիճակին: «Ալեքսանդրապոլի կապը «Արծուի Վասպուրական» ամսագրի և նրա խմբագիր Մկրտիչ Խրիմյանի հետ» թեմայով հանդես եկավ ԳԱԱ պատմության ինստիտուտի բաժնի վարիչ, պրոֆեսոր Է.Կոստանդյանը: Հ.Սահակյանի հաղորդման թեման իր հայրենի գյուղի՝ Զույգաղբյուրի հիմնադրման և նրա եկեղեցու անվան վիճահարույց հարցն էր: Գիտաժողովին երկու թեմաներով հանդես եկավ ԳԱԱ ՀՀՀ կենտրոնի գիտաշխատող Կ.Ալեքսանյանը: Առաջին հաղորդումը նվիրված էր 1915-18թթ. Ալեքսանդրապոլի հասարակական կազմակերպությունների որբախնամ գործունեությանը, իսկ երկրորդը՝ 1918-20թթ. Ալեքսանդրապոլի Արևմտահայ գաղթականությանը: 1918թ. դեկտեմբերին Ալեքսանդրապոլի գավառից թուրքերի հեռանալուց հետո շուրջ 320000 թուրքահայ գաղթականների խնամատարության դժվարագույն հարցին ու լուծումներին անդրադարձը ցույց է տալիս քաղաքային ինքնավարության գաղթականական կոմիտեի գործունեության անարդյունավետությունը, որը բերում է բազմաթիվ զոհերի: ՀՀՀ կենտրոնի ասպիրանտ Գ.Այվազյանը խոսեց XIXդ. վերջին Ալեքսանդրապոլի գավառում տիրող ագրարային հարաբերությունների մասին: Բերված փաստերը վկայում են, որ XIXդ. 90-ական թթ. ծանր կյանքի համայնապատկերի բաղադրիչներից մեկը գյուղական բնակչությանը հողով ապահովելու խնդիրն էր:

Երևանի Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Գյումրու մասնաճյուղի դասախոս Ա.Գևորգյանի հաղորդման մեջ բազմաթիվ փաստերի համադրման միջոցով համակարգվեցին 1988թ. Արցախյան շարժման զարգացման փուլերը Լենինականում:

Դրասխանակերտի /Բենիամին/ տաճարի նախագծի վերականգնմանն էր նվիրված ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Ֆ.Տեր-Մարտիրոսովի հաղորդումը: Աբեմենյան պատմաշրջանի հայ մշակույթի այս եզակի կոթողը հնարավորինս խորքային պատկերացումներ է տալիս տվյալ ժամանակաշրջանի տաճարաշինության ու պաշտամունքային արարողակարգի մասին: ՀՀՀ կենտրոնի ավագ գիտաշխատող Լ. Եգանյանի հաղորդումը վերաբերում էր 2000թ. Մարմաշենում հայտնաբերված քարե վիշապների ծիսական բովանդակությանը, որ կապվում է ջրի պաշտամունքի հետ: Սեպագիր աղբյուրներում Շիրակին վերաբերող նյութերին անդրադարձավ Հնագիտության ու ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Ս.Հմայակյանը: Դիտարկվեցին ուրարտական այն արձանագրությունները, որոնք Շիրակում հիշատակում են վեց իշխանություններ և ցեղապետություններ՝ միավորված Էրիախի թագավորության կազմում:

«Կումայրի» արգելոց-թանգարանի գիտաշխատող Ի. Ավագյանի հաղորդումը նվիրված էր XX դարասկզբին Ալեքսանդրապոլի տարածքում հայտնաբերված նյութերին, որոնք 1929թ. Հակոբ Կարանյանը նվիրել էր Հայաստանի պատմության պետական թանգարանին: ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող Կ. Թոխատյանի հաղորդումը վերաբերում էր Հայաստանի հյուսիսում, այդ թվում նաև Շիրակում հայտնաբերված ժայռապատկերներին և պաշտամունքային կառույցների որմնագրերին: Մասնաճյուղի աշխատանքները եզրափակեց Գյումրու մանկավարժական ինստիտուտի դասախոս Ք.Մարգսյանը՝ խոսելով Շիրակում X-XIIIդդ. կանանց շինարարական և նվիրատվական գործունեության մասին՝ վկայված միջնադարի հայ պատմիչների երկերում:

Բ մասնաճյուղի անդրանիկ նիստն սկսվեց ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Ս.Պողոսյանի հաղորդումով, որը նվիրված էր Շիրակի ավանդական զարդահամալիրին: Մանրազնին նկարագրության ամփոփման մեջ կարևորվեց ոսկե և արծաթե զարդերի նկատմամբ շիրակցիների հակվածությունը, դրանք սերնդեսերունդ աղջիկներին փոխանցելու սովորույթը: Նույն ինստիտուտից հանդես եկան նաև ազգագրագետներ Հ. Մարգսյանը՝ «XIXդ. արևմտահայերի ներգաղթի դերը Գյումրի-Ալեքսանդրապոլի արհեստագործական ավանդույթների ձևավորման մեջ» և Ն.Մարգարյանը՝ «Լենինական-Երևան մրցակցության արտահայտությունները 70-80-ականների զվարճախոսություններում և սրամտություններում» հաղորդումներով: Մ.Գալստյանը խոսեց արդի շրջանում Շիրակի մարզի բնակչության աշխատանքային միգրացիոն գործընթացների մասին, Է.Խեմչյանի և Ս.Վարդանյանի հաղորդումը նվիրված էր Շիրակի բանահյուսական ժառանգությանը (ըստ ՀԱԻ-ի բանահյուսական արխիվի նյութերի), իսկ պատմական միջավայրի պահպանության ծառայության աշխատակից Հ. Գալստյանի զեկուցման թեման Շիրակի Վահրամաբերդ գյուղի արդի բանահյուսությունն էր:

ՇՀՀ կենտրոնի գիտաշխատողներից այս մասնաճյուղում հանդես եկան՝ Կ.Բազեյանը՝ Ալեքսանդրապոլի քաղային կոիվների՝ որպես ժամանցի յուրօրինակ դրսևորումների մասին հետաքրքիր հաղորդումով, Ալեքսանդրապոլի օրինակի վրա Գ.Աղանյանը գնահատեց համբարությունների դերը XIXդ. հայոց սոցիոնորմատիվ մշակույթում, իսկ Ա.Բոյաջյանի հաղորդումը նվիրված էր 1946-47թթ. հայրենադարձների զբաղվածությանն ու Լենինականում նրանց սոցիալական վիճակին: Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի դասախոս Ն.Գաբրիելյանը խոսեց արդի շրջանում Շիրակի մարզի բնակչության միգրացիոն գործընթացների մասին, իսկ Գյումրու մանկավարժական ինստիտուտի ամբիոնի վարիչ Ե.Վարդանյանը՝ Գյումրիում զենդերային հավասարության ընկալման և հեռանկարների հարցի շուրջ: Շիրակի «Տան սրբերի» ժողովրդական հավատալիքներին էր վերաբերում Սմբատ աբեղա Պողոսյանի հաղորդումը: Արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող Կ.Սամվելյանը խոսեց նկարչուհի Մարիամ Ասլամազյանի կտավների ազգագրական հենքի մասին: ՇՀՀ կենտրոնի գիտաշխատող Կ.Սահակյանի և Տեխնիկական էսթետիկայի համառուսաստանյան գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատակից Կ.Գալոյանի համատեղ հաղորդումը նվիրված էր Գյումրու նոր բրենդին՝ որպես Հոր Երանելու հոգեբանական բարդույթի հաղթահարման յուրահատուկ ձևի:

Գ մասնաճյուղի աշխատանքներն սկսվեցին արվեստագիտության դոկտոր, ԳԱԱ թղթակից-անդամ Մ.Հասրաթյանի Անիի քաղաքաշինությանը նվիրված հաղորդումով, որտեղ խոսվեց նաև 2007թ. Անիում ֆրանսիական հնագիտական արշավախմբի կատարած աշխատանքների արդյունքների մասին: Գիտնականը քննադատաբար արտահայտվեց թուրքերի կողմից վերջերս իրականացված որոշ վերականգնողական աշխատանքների մասին, որոնք խեղաթյուրում են ոչ միայն Անիի պատմությունը, այլև ճարտարապետական անաղարտությունը: Ճարտարապետության թանգարան-ինստիտուտի տնօրեն Ա.Հայկազուն-Գրիգորյանի ուշագրավ զեկուցումը նվիրված էր Անիի պաշտպանական կառույցների հորինվածքային և գործառնական առանձնահատկություններին:

Երաժշտագիտական հաղորդումներից առաջինը Հր.Աճառյան համալսարանի ամբիոնի վարիչ Խ.Բաղդիկյանի զեկուցումն էր՝ նվիրված Կոմիտասի՝ Շիրակում կատարած բանահավաքչական աշխատանքների տարեգրությանը: ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող Ա. Բաղդասարյանի հաղորդումը Ալեքսանդրապոլում մեծ ժողովրդականություն վայելող աշուղական հայրենասիրական երգի ժանրային առանձնահատկությունների, երաժշտության և խոսքի հորինվածքային բազմազանության մասին էր: Նույն ինստիտուտի փոխտնօրեն Ա. Ասատրյանի ելույթը նվիրված էր XXդ. սկզբին Ալեքսանդրապոլ-Լենինականում ստեղծագործական, հասարակական և մանկավարժական գործունեություն ծավալած կոմպոզիտոր Դանիել Ղազարյանին: Արժևորվեց հատկապես նրա ջանքերով այստեղ բացված երաժշտական ստուդիայի պատմական նշանակությունը, ինչպես նաև այստեղ բեմադրված մանկական օպերաների ու անգուգական երգերի մեծ ժողովրդականությունը: Ալեքսանդրապոլի քաղաքային ու աշուղական երգարվեստին էր նվիրված Երևանի Գրականության ու արվեստի թանգարանի բաժնի վարիչ Մ. Հարությունյանի հա-

ղորդումը Կ.Կոստանյանի «Ինչ երգեր էինք լսում մեր մանկության օրերում» հուշագրության մասին: ՇՀՀ կենտրոնի գիտաշխատողներ Հ. Հարությունյանն ու Հ. Ափինյանը խոսեցին Շիրակի և, մասնավորապես, Գյումրու երաժշտական ժառանգության արդի հիմնախնդիրների մասին: Առաջինը կանգ առավ բանավոր ավանդույթի պրոֆեսիոնալ երաժշտության հատկապես մուտքմների՝ մերձավորարևելյան դասական երաժշտության համատեքստում դիտարկելու խնդրի վրա, երկրորդը՝ իր «Դիտարկումներ Շիրակի ժողովրդական երաժշտության ուսումնասիրման խնդրի շուրջ» հաղորդման մեջ խոսեց Շիրակի երաժշտական ժառանգության համալիր ուսումնասիրության անհրաժեշտության մասին, որը հնարավոր կլինի իրականացնել մի քանի գիտական հաստատությունների համատեղ ջանքերով: Երևանի կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի դասախոս Ն. Հայրապետյանն անդրադարձավ ժամանակակից գյումրեցի կոմպոզիտոր Արմեն Հարությունյանի վոկալ շարքերին՝ գրված Սիամանթոյի բանաստեղծություններով:

Շիրակի կերպարվեստին էին նվիրված ՇՀՀ կենտրոնի գիտաշխատող Լ.Աբանեսյանի և Երևանի Գեղարվեստի ակադեմիայի Գյումրու մասնաճյուղի դասախոս Ա.Մարգարյանի ելույթները: Լ.Աբանեսյանը «Գյումրեցի նկարիչներ» շարքից առանձնացրել էր Գևորգ Բրուտյանի ստեղծագործությունը, որի բազմաթիվ գրաֆիկական աշխատանքներն արժևորվեցին որպես Ալեքսանդրապոլի քաղաքային կենցաղի ու սովորույթների կենդանի պատկերներ: Ա. Մարգարյանը ևս կարևորել էր Լենինականի քաղաքային դրոշմի տիպական գծերի արտացոլումը մեկ այլ արվեստագետի՝ Մարիամ Ասլամազյանի գեղանկարչության մեջ:

Մասնաճյուղում հանդես եկան նաև գրականագետներ.Հայաստանի գրողների միության Գյումրու բաժանմունքի նախագահ Ա.Կարապետյանի հաղորդումը Շիրակի արդի բանաստեղծության համապատկերի փորձ էր, իսկ ՇՀՀ կենտրոնի գիտաշխատող Ռ.Հովհաննիսյանը իր բովանդակալից խոսքում անդրադարձավ գյումրեցի վաղամեռիկ բանաստեղծ Աշոտ Ավդալյանի բանարվեստի արտահայտչամիջոցներին ու լեզվի պատկերավորման համակարգին:

Կարևոր բարբառի՝ Շիրակում գրառված խոսվածքներին էր նվիրված Սլավոնական համալսարանի ամբիոնի վարիչ Ջ.Բառնասյանի հաղորդումը Շիրակի տարբեր գյուղերից հավաքված 500 խոսվածքային միավորների մեջ հանդիպող առավոտ օրապահին վերաբերող բառանվանումների հոմանիշային բազմազանության մասին: Ա.Հայրապետյանի «Դարձվածային միավորներն Ալեքսանդրապոլի հեքիաթներում» հաղորդման մեջ բացահայտվեցին ժողովրդախոսակցական դարձվածքներում բնակչության լեզվամտածողության, աշխարհընկալման, կենցաղի առանձնահատկությունների տիպական դրսևորումները:

Մասնաճյուղի նիստերում արվեցին նաև հայոց լեզվի դասավանդման մեթոդաբանությանը վերաբերող հաղորդումներ (Թ. Ալեքսանյան, Ժ.Ռոստոմյան):

«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական յոթերորդ գիտաժողովը խիստ ներկայացուցչական էր. նրա աշխատանքներին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության 25 գիտական, մշակութային հիմնարկություններ, տարբեր բուհերի հումանիտար և հայագիտական ամբիոններ: Շուրջ յոթ տասնյակ զեկուցումները ուղեկցվում էին բուռն քննարկումներով և ամփոփվեցին եզրափակիչ լիագումար նիստում (21 հոկտեմբերի)՝ արժևորելով շիրակագիտության ներկա ձեռքբերումների նշանակությունը հայագիտության համատեքստում, նաև որոշում կայացվեց ՇՊՄԺ հանրապետական ութերորդ գիտական նստաշրջանը գումարել 2010թ. հոկտեմբերին:

Իր գիտական և կազմակերպչական ամենաբարձր մակարդակով գիտաժողովը նրա բազմաթիվ մասնակիցների հիշողության մեջ կմնա որպես հայագիտության իսկական տոն Շիրակի սրտում՝ Գյումրիում:

18 նոյեմբերի, 2007թ.

ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքում տեղի ունեցավ ԳԱԱ Շիրակի հայագիտական կենտրոնի գիտաշխատող, բանաստեղծուհի Ռոզա Հովհաննիսյանի երկրորդ՝ «Մինչև երանելի խորքը» բանաստեղծական գողտրիկ ժողովածուի (ձևավորող նկարիչ՝Վ.Պահլավունի Թադևոսյան) շքնորհանդեսը: Ռեժիսոր Սիրանուշ Ղուկասյանի հուզիչ խոսքը խորքային և սահուն անցումներով ընդմիջվեց հեղինակի գրչակից ընկերների սրտաբուխ ելույթներով, ինչպես նաև Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի ուսանողների համերգային կատարումներով: Արտահայտվողներն արժևորեցին բանաստեղծուհու նոր ժողովածուն՝ այն համարելով առաջին ժողովածուի հոգեմտավոր շարունակությունն ու նոր թափ: Օրվա և բանաստեղծության խորհրդին վայել իր օրհնությունն էր բերել Հայ Առաքելական Եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպիսկոպոս Աջապահյանը: Բանաստեղծուհին երախտագիտություն հայտնեց Շիրակի թեմի առաջնորդարանին՝ գրքի մեկենասության համար: